ՀԱՍՄԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական
ֆակուլտետի մագիստրոս
ՀՏԴ 821.19.0

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ԽՆՋՈՒՅՔԻ ԵՎ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐԸ

Բանալի բառեր. խնջույք, ուրախություն, մարդ, մարդասիրություն, բնություն, հավերժություն, կենսասիրություն, վայելք, աշխարհիկ։

Ключевые слова: пиршество, радость, человек, гуманизм, природа, вечность, любовь к жизни, удовольствие, мирской.

Keywords: feasting, joy, man, humanity, nature, eternity, love of life, fun, profane.

Ն. Հովնաթան-բանաստեղծի դիմանկարն՝ իր առավել կենսական գույներով ու պատկերներով դրսևորվում է խնջույքի և ուրախության երգերում։ Խնջույքն ու ուրախությունը, որպես կյանքի գլխավոր ապրում, անցնում են նրա գրեթե բոլոր տաղերի միջով։ Բանաստեղծը կարծես ուղղակիորեն արտահայտում է իր հույզերը, իր վերաբերմունքը, իր անդիմադրելի ձգտումը՝ վայելելու կյանքը, գինին մարդուն վերածնող բնության գրկում՝ հակադրվելով քրիստոնեական կրոնի գաղափարախոսությանը։ Գրականագետ Աս. Մնացականյանը, մեծ դեր վերագրելով հիշյալ տաղերին, գրում է. «Խնջույքի և ուրախության այսպիսի տաղերին մեծ դեր էր վիճակված՝ նոր շունչ մտցնելու շարականներով ու հոգևոր տաղերով գոհացող հասարակական հավաքույթների, ճաշկերույթների ու հարսանիքների կենսուրախ ոլորտները։ Նաղաշ Հովնաթանը այս առումով առաջին խոշոր բանաստեղծը, երգիչը և նվագողն էր»[1]։ Կարծում ենք՝ սա արժանի գնահատական է։ Չնայած Ն. Հովնաթանից առաջ էլ գրված են եղել խնջույքի և ուրախության երգեր, բայց, այնուամենայնիվ, նա առաջինն է մեզանում ստեղծել այդպիսի երգերի մի ամբողջական շարք։ Այդ երգերի թիվը հասնում է 13-ի, դրանք սիրվել են ինչպես ժամանակակիցների կողմից, այնպես էլ սիրվել ու տարածվել են հետագայում. «…պատճառն այդ երգերի խիստ աշխարհիկ բովանդակությունն ու աշխարհաբար լեզուն է բանաստեղծական այն կատարյալ ձևերի մեջ, որ ստեղծել է Նաղաշ Հովնաթանը»[2]։

---

[1] Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Երևան, 1983, էջ 9-10։

[2] Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ XXIII։

Խնջույքի և ուրախության շարքը բացվում է «Տաղ ի վերայ Այւազին ջրաղացին. Ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ» տաղով։ Այստեղ Հովնաթանը գովում է Այվազի «վանօրէից նմանեալ շուրջանակի» պարիսպներով ջրաղացը։ Այդ պատվական ջրաղացը իր շուրջն է հավաքում կյանքի սիրահարներին։ Այսօր գուցե չկա Այվազի ջրաղացը, բայց կարևորը ջրաղացի գոյության փաստը չէ, այլ բնության դեմ մաքառող, նրան վերափոխող մարդկային ստեղծագործ աշխատանքը, ժամանակի ու տարածության հեռվից ջրաղացի փրփնջագոչ ու պաղպաջական ջրերի, ասել է թե՝ Հովնաթանի թարմ ու կենսուրախ տաղերի մնայուն արժեքը նորօրյա տեսողությամբ։

Ն. Հովնաթանի խորհրդածությունների արդյունքը կենսառողջ մարդն է, որի կյանքը գեղեցկանում և հարստանում է մաքրագործ աշխատանքի շնորհիվ։ Բանաստեղծը փորձում է վառ պահել աշխատավորների, բարիքներ ստեղծողների հիշատակը։ Եվ արդարացի է Հովնաթանն իր մտքերի թափի մեջ.

Պարտիմք աշխատողացն ողորմի տալ մէկ բերան…[3]
…Աշխատողաց կեանս խնդրեցէք … (97)։

Աշխարհիկ տրամադրությունները շարունակվում են «Տաղ Շուռութեցի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ ի վերայ ուրախութեան սեղանոյ» տաղում։ Բանաստեղծի հոգեպարար ապրումներն իր ստեղծագործական խառնարանից դեպի կյանք են հորդում ուրիշ ուղիով ևս.

Նստեմք ի մէջլիս, հարք և եղբայրք և մեծ պարոնայք,
Գոհանամք զտէառնէ, որ ունիմք սեղան. դուք միշտ շէն կենայք,
Խնդրեմք, որ այսօր, քան զամենայն օր, շատ ուրախանայք.
Թասերն չինի՝
Կարմիր գինի՝
Ձեզ անուշ լինի.
Աղա՛մ, է՛
Ձեզ անուշ լինի (77)։

Նկատենք, որ այստեղ և առհասարակ խնջույքի տաղերում առաջնայինը լավ կենցաղը կամ ժամանցը չէ, ինչպես սխալմամբ գտնում են որոշ գրականագետներ։ Ասել, թե Հովնաթանը պարզապես կոչ է անում հավաքվել ուրախության սեղանի շուրջ ու գինի խմել, նշանակում է չհասկանալ բանաստեղծին։ Բանաստեղծության ներքին տրամադրությունը թելադրված է հեղինակի՝ մարդասիրության, եղբայրասիրության և

[3] Նաղաշ Հովնաթան, Տաղեր, էջ 90 (այսուհետև այս ժողովածուի երգերից բոլոր մեջբերումներին կից կդրվեն համապատասխան էջերը)։

խաղաղասիրության հաստատման լուսավոր հավատով, և արդար է իր պահանջի մեջ Հովնաթանը։

Ապա ում սրտի քէն ունի՝ հանէ, հաշտութեամբ մնայ,
Լաւ մարդն այն է, ինչպես եկեալ է՝ էլ այնպէս գնայ,
Աստուած կու սիրէք մինչև օրհնելն մարդ չի՛ վեր կենայ…
…Այս մէջլիսումս տխուր և դառն մարդն չէ՛ խառն … (78)։

Ուշագրավ է այս տաղի հետ կապված Աս. Մնացականյանի այն նկատառումը, թե Նաղաշ Հովնաթանի հաջորդը՝ Սայաթ-Նովան, վրացական արքունիքում գերված այս տաղի հմայքով, գրեց իր «Քանի վուր ջան իմ» երգը և ծանոթագրեց. «Էսպէս, Արութինի ասած՝ «Թասերն չինի, կարմիր գինի» խաղի հանգում…»[4]։

Ն. Հովնաթանի խնջույքի և ուրախության տաղերը պիտի քննել տարբեր տեսանկյունից. նախ՝ դրանք ունեն ճանաչողական մեծ արժեք, ապա՝ շոշափում են մարդու և բնության փոխհարաբերությունները, իսկ երրորդ կողմը՝ կյանքի ու մահվան բարդ փիլիսոփայական հարցն է։

Այդ երգերի ճանաչողական արժեքը բնորոշվում է այն հանգամանքով, որ դրանք մեզ տեղեկություն են տալիս 17-րդ դարի ազգային կերակուրների և խմիչքների մասին։

Այսպես, տաղերից մեկում կարդում ենք՝

ԷՀ՞ր չէք խնդալի, որ այսօր ունիմք լաւ գինի սառն,
Ղապլու, խորովու, հաւ, քեապապներ, խաշլամայ գառն … (78)։

Ընդգծենք այս տաղերի պատկերային ավազանի մաքրությունը՝ զերծ ամեն տեսակի արհեստականությունից և չափազանցումից, և սա կարևոր գեղագիտական առանձնահատկություն է Հովնաթանի տաղերում։ Փոխարենը մենք տեսնում ենք ազգային ուտելիքների ու խմիչքների գովքը ժամանակի համանվագում։

Որոշ երգերում էլ տեսնում ենք Մեծ Բարեկենդանը՝ ծիսական մանրամասնություններով, ժողովրդական առողջ տրամադրություններով։ Ն. Հովնաթանը նկարագրում է Բարեկենդանի առատ սեղանները, որոնց շուրջ հավաքվում են կենսուրախ մարդիկ՝ պայծառ տրամադրության շեշտերով.

Այսօր հագէք դումաշ աղլագն,
Զարդարէք օթաղ և դարպասն,
Դուրս բերէք չինի, արծաթ թասն.
Հիմի ածէք չօնգուր, շաւասն,
Պասին՝ չոր բոխի, քաբասն (87-88)։

---

[4] Նաղաշ Հովնաթան, Տաղեր, էջ 9։

Պիտի ընդգծել, որ Հովնաթանն իր տաղերում որոշ վերապահումներով է խոսում պասի մասին։ Մ. Աբեղյանը հետևյալ կերպ է բացատրում Հովնաթանի դիրքորոշումը։ «Պաս պահելը, մարմինը տանջելն, ուրեմն, ոչ մի արժեք չունի հանդարձյալ կյանքի համար։ Այսպիսով մի կողմ է դրվում մարմնատանջ ճգնավորական միտքը, և բանաստեղծը կարող է ազատ կերպով, հանգիստ խղճով «մարմնաւոր ուրախանալ» առանց հոգուն վնասելու երկյուղի»[5]։

Ն. Հովնաթանի խնջույքի և ուրախության տաղերը դուրս են գալիս զուտ ճանաչողական սահմանագծից, և գաղափարական եզրակացությունը մարդու և բնության միասնությունն է։ Այսպես, խնջույքի սեղանների նկարագրության անբաժանելի մասը բնությունն է, հայրենի բնության գեղեցկությունների նկարագրությունը։ Հովնաթանի պանթեիստական հայացքներն արտահայտված են շատ տաղերում։ Նրա սիրտը տրոփում է բնության հետ, և բանաստեղծն ուզում է ուրախանալ, ասել է թե՝ ապրել, որովհետև վերջինիս գեղագիտական համակարգում ուրախանալը կարելի է դիտել ապրելուն հոմանիշ, բնության գրկում.

Յորժամ եղև գարուն, արև ծագեցաւ,
Հարաւ հողմն հնչեաց, սառն հալեցաւ,
Երկիր կանանչացաւ, ծառն ծաղկեցաւ,
Խմե՛նք, եղբարք, գինի,
Բանն աստուած շինի (83)։

Գրականագետ Ա. Դոլուխանյանը, կարևորելով Ն. Հովնաթանի խնջույքի և ուրախության տաղերի գեղագիտական կողմը, գրում է. «… նա պատգամում է չափավոր կերուխումը, շեշտում խնջույքի դաստիարակչական, ջերմացնող էությունը, պահանջում պահպանել խնջույքի գեղագիտական կողմը՝ կանաչ խոտի վրա, աղբյուրի մոտ, ծաղկած ծառի հովանու ներքո, սփռոցին՝ բուրումնավետ ծաղիկներ»[6]։

Բանաստեղծը միաժամանակ զգուշացնում է չափը չանցնել և պարկեշտությամբ ըմպել։ Խաղաղության պաշտպանության գաղափարը Հովնաթանի՝ մարդու և բանաստեղծի, բոլոր մտահոգությունների առանցքն է.

Այլ և խաղաղութեամբ խմելն է հալալ,
Ո՛չ հարբիլ, ո՛չ կռուիլ և ո՛չ բարկանալ,

---

[5] Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 430։

[6] Ալիտա Դոլուխանյան, Հայ գրականության պատմություն (Հին և միջնադարյան գրականություն), Երևան, 2006, էջ 17։

Պարկեշտութեամբ ըմպել, սիրով զուարճանալ … (84)։

Ինչպես տեսնում ենք, Ն. Հովնաթանը կոչ է անում վայելել կյանքը։ Վայելումի քաղցրությունն է բանաստեղծն արտահայտում իր տաղերում, աշխարհասիրությունը՝ սիրո և խրախճանքի ակնհայտ առավելությամբ՝ դառնության և անհուսության դիմաց։ Բնութագրական է նման հոգեվիճակների շուրջ Ա. Չոպանյանի գնահատությունը. «Յովնաթանի ներշնչումը ավելի է պարզ է. Անոր գլխաւոր աղբիւրն է կեանքի հրճուանքը, երջանիկ արեւոտ խառնուածք մը, որուն համար կեանքը քաղցր եղած պէտք է ըլլայ և որ իր երախտագիտութիւնը կը յայտնէ կեանքին՝ խանդաղատագին անուշութիւնով մը երգելով անոր հաճոյքները որ բնութեան գողտր գեղեցկութեանց ծոցը կը փթթին»[7]։

Ն. Հովնաթանը կենսասեր է, ներբողել է աշխարհիկ կյանքը, երգել աշխարհիկ կյանքի հմայքները, հյուսել է երազների իր աշխարհը՝ լեցուն սիրով, ջերմությամբ, ուրախությամբ և բորբոքել կյանքի ու մահվան հավերժական առեղծվածը։.

Վաղիւն ոչ գիտես, թե զի՞նչ ծնանի,
Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,
Որ այսօր բացուեալ է, վաղիւն անցանի.
Խմենք, եղբարք, գինի,
Բանն աստուած շինի (83)։

Բանաստեղծական այս խոհը համահունչ է «Սաղմոսաց գրքի» հետևյալ տողերին. «Մարդուն օրերը խոտի պէս են դաշտի ծաղկի պէս կը ծաղկին։ Վասն զի հովը անոր վրայէն կ՚անցնի ու ան կ՚ոչնչանայ եւ ա՛լ անոր տեղը չի ճանչնար զանիկա» (Սաղմոս, 103, 15-16)։

Այսպիսի խոհերի առումով տեղին է հիշել աշուղ Ջիվանու՝ աստվածաշնչյան թեմաների վրա հիմնված խոհափիլիսոփայական ըմբռնումները, որոնք այնքան հարազատ են Հովնաթանի երգարվեստին.

Ի՞նչ է մարդը աշխարհի մեջ՝ ծաղկի պես անցողական,
Եթե ունի մի բարի գործ, նա կը մնա հավիտյան…[8]

Կյանքը վաղանցուկ է, պետք է վայելել նրա բոպեական քաղցրությունները. սա է այն կենսական գիծը, որն անցնում է Ն. Հովնաթանի բանաստեղծության միջով և միևնույն շարունակական տեսողությամբ արտահայտություն է գտել նաև նոր ժամանակներում, ինչը

[7] Արշակ Չօպանեան, Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 13։

[8] Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր, աշխատասիրությամբ՝ Թովմաս Պողոսյանի, Երևան, 2009, էջ 476։

խոսում է Հովնաթանի բանաստեղծության անժամանցելի գծերի մասին։ «Իրական կյանքը խելացի վայելելու խոհը, - գրում է Ա. Դոլուխանյանը, - կա և՛ հայ միջնադարյան քնարերգության մեջ, և՛ թե նոր ժամանակներում»[9]։

Այսպես, հանճարեղ Սայաթ-Նովայի բանաստեղծական տեսադաշտում ևս հնչեղություն է ստանում գոյության առեղծվածը՝ որպես ապրումի, կենսական տրամադրության դրսևորման ընթացք.

Ո՞վ կոսե, թե յիս կու ապրիմ առուտումեն ինչրու մուտքն.
Աստրձու ձեռումքն հիշտ է մարդու աշխարք ելումուտքն …[10]

20-րդ դարի երկրորդ կեսին Հ. Սահյանը հովնաթանյան տրամադրությամբ և վերստին միևնույն հոգեբանական ելակետային կացության մեջ գրելու էր.

- Խփիր այս պահի կենացը խմենք,
Մի վայրկյան հետո գուցե չլինենք[11]*։*

Առողջ է ու սթափ Ն. Հովնաթանի հայացքը։ Նա կյանքի, ասել է թե՝ սուրբ պահի իմաստավորման ճանապարհն է իր համար ուղենիշ դարձրել։ Կյանքը բանաստեղծի երազի ավազանն է, և բոլոր դեպքերում նա մնում է կյանքին սիրահարված՝ իրականության անկաշկանդ տեսողությամբ.

Այլ կե՛ր, խմէ՛ հետ ընկերաց՝
Քանի որ ֆրսանդ կայ ձեռաց,
Գալ տարի՝ ո՞վ սաղ, ո՞վ մեռած… (80)։

Կարծես թե Հովնաթանի՝ «Անցեալ օրին օր չի՛ հասնի, կեղնիք փոշիման» կենսափիլիսոփայությամբ Հովհ. Թումանյանը գրում է.

- Էս է, որ կա… Ճիշտ եմ ասում, թասրդ բե՛ր։
Էս էլ կերթա՝ հանց երազում, թասրդ բե՛ր։
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում, թասրդ բե՛ր[12]*։*

Հովնաթանի ներաշխարհի այս տրամադրությունները հարազատ են արևելյան պոեզիային. «Իր աշխարհայացքը այն է, զոր Ովրատիոս ու Խայեամ տարբեր շեշտերով՝ երգեցին. «կեանքը աղուր, բայց վաղանցուկ, կ՚ըսէ Յովնաթան, պետք է օգտուիլ անոր ընծայած բոպէական քաղցրություններէն…», - գրում է Ա. Չոպանյանը[13]։ Ն. Հովնաթանի

[9] Ալիտա Դոլուխանյան, Համընդհանուր իմաստախոսություններ, Երևան, 2012, էջ 62։

[10] Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Երևան, 1987, էջ 62։

[11] Համո Սահյան, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Երևան, 1894, էջ 196։

[12] Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 77։

[13] Արշակ Չոպանեան, նշվ. աշխ., էջ 13- 14։

աշխարհայացքի արևելյան կողմնորոշման մասին գրում է նաև Հովհ. Թումանյանը իր «Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի սերը» գրախոսության մեջ։

Կենսասիրությամբ շնչող Ն. Հովնաթանի ստեղծած աշխարհում հենց սկզբից էլ իբրև հայտնություն հնչում է ուրախ մոտիվը՝ գինու միջոցով արվեստագետի արբեցումով, որպես երջանկության և կարոտի, հրապույրի ու վայելքի ապրման լավագույն եղանակ, որպես վերջինիս խնջույքի և ուրախության երգերի կարևոր բաղադրիչ՝ այսպիսով յուրովի մոտենալով Օմար Խայամին։

Ներկայացնելով Ն. Հովնաթանի խնջույքի և ուրախության տաղերի համադրական քննությունը՝ գալիս ենք այն համոզմանը, որ նրա ըմբռնումի համաձայն մարդկային գոյության բարձր բանական սկզբունքը ճիշտ ձևավորված արժեհամակարգն է՝ հիմնված բարության, արդարության, եղբայրասիրության, խաղաղության սկզբունքների վրա։ Եվ սրանք հավերժության առեղծվածի առաջնայնությունից ծնված վերժամանակյա հարցեր են, որոնց միջոցով Ն. Հովնաթանը խոսելու է բոլոր ժամանակների հետ։ Ակնհայտ են Հովնաթանի բանաստեղծության բովանդակության՝ Աստվածաշնչի հետ ունեցած առնչությունները, որից ստացած ենթակայական ազդակը վերջինիս համար բացում է մի նոր նախադուռ հայտնության և հոչակի ճանապարհին։

Հ. Հովսեփյան

Նաղաշ Հովնաթանի խնջույքի և ուրախության երգերը

Ամփոփում

Հոդվածում ներկայացրել ենք Նաղաշ Հովնաթանի խնջույքի և ուրախության երգերը։ Ցույց ենք տվել, որ դրանք դուրս են գալիս զուտ ճանաչողական սահմանագծից և գաղափարական եզրակացությունը մարդու և բնության միասնությունն է։ Հատկապես կանգ ենք առել հեղինակի բանաստեղծության մարդասիրական որակներին և վերջինիս կենսասիրական մղումներին կյանքի յուրաքանչյուր պահի իմաստավորման ճանապարհին՝ հանգելով այն եզրակացությանը, որ Հովնաթանի բանաստեղծական աշխարհում մարդը ձեռք է բերում ընդհանուր և համամարդկային գծեր։

А. Овсепян

Песни пиршества и радости Нагаша Овнатана

Резюме

В статье представлены песни пиршества и радости Нагаша Овнатана. Мы показали, что они находятся вне познавательной границы, и идейное заключение является единство человека о природы. Особенно мы остановились на гуманитарных качеств и жизнелюбие автора, на каждом шагу осмысления жизни, и пришли к выводу, что в поэтическом мире Овнатана, человек приобретает общие и общечеловеческие черты.

H. Hovsepyan

Songs of feasting and joy of Nagash Ovnatan

Summary

The article presents the songs of feasting and joy of Nagash Ovnatan. We have show that they are outside the boundaries of the cognitive, and the ideological conclusion is the unity of man and nature. Especially we stopped at the humanitarian qualities and love for life of the author, every step of thinking about life, and we came to the conclusion that in the poetic world of Ovnatan, the person gets the common and universal human traits.